Հակոբյան Գ. - Բուհի ռեկտոր. Վարձավճարները ցածր են՝ փաստացի ծախսերի հետ համեմատած – թերթ, «Առավոտ»,Ե., 30.05.2013
(Հատված հոդվածից)

Aravot.am-ը որոշ բուհերի ռեկտորներից հետաքրքրվեց, թե ինչո՞ւ են որոշել բարձրացնել ուսման վարձերը եւ ո՞րն է դրա հիմնավորումը: Գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանն Aravot.am-ին ասաց, որ իրենց բուհում առայժմ բարձրացում չկա, սակայն մյուս տարի իրենք էլ կգնան մյուս բուհերի ճանապարհով: «Մենք չբարձրացրինք ուսման վարձավճարները, որովհետեւ չհասցրինք անել, մյուս կողմից էլ դա անհրաժեշտություն է, որը հստակ հաշվարկներ է պահանջում: Բուհի գումարների պետական մասի միջոցով հնարավոր չէ այն մակարդակի եւ որակի ուսում ապահովել ուսանողների համար, որը պարտավոր ենք անել: Բավարար չէ նաեւ վճարովի համակարգի միջոցով ստացվող գումարը: Շատերն ասում են՝ ինչո՞ւ Ձեզ մոտ այնպես չէ, ինչպես Ֆրանսիայում, Անգլիայում կամ մեկ այլ երկրում, բայց չէ՞ որ նրանց վարձերն է բարձր: Ստացվում է՝ կա՛մ պետք է պետությունը ամբողջ ծախսերը վերցնի իր վրա եւ ուսանողին ապահովի ամեն ինչով, կամ պետք է այդ ծանրությունն ընկնի ուսանողի վրա»,-ասաց Գեղարվեստի ակադեմիայի ռեկտորը:

Գոհար ՀԱԿՈԲՅԱՆ

https://www.aravot.am/2013/05/30/249040/